

ղութեանը համար կաղաչէր եւ կը յանձնարարէր : Յիշեալ նամակները տեսանք եւ անոնց պարունակութեանը վերահասու եղանք այնպէս ինչպէս որ թագաւորը կը յայտնէր : Վերոյիշեալ պատուիրակներն ալ իրենց ընծաներով հասան, որոնք զրկուած էին բարձրաստիճան անձերու համար , եւ նոյն պատուիրակները ներկայացուցինք մարդասէր իշխանին : Ընծաները սիրով ընդունուեցան եւ գնահատուեցան նոյն բարեսէր անձերու կողմէ . իսկ թագաւորին յիշեալ նամակները կարգացինք բարեսէր անձերու առջեւ : Այս բանը պատմուեցաւ բարձր խորհրդականներու քով ալ , որոնցմէ խնդրեցինք առատաձեռն չնորհ , (Աստուած աւելցնէ անոնց պերճութիւնը), որպէս զի թագաւորին խնդիրքը կատարուի : Այս խնդիրքը լաւ կերպով ընդունուեցաւ եւ բարեսէր անձինք նոյն խնդրին վրայօք թղթակցեցան, եւ կարեւոր հրահանգներ արուեցան (Աստուած փառաւորէ Ձեր Վսեմութիւնը) յիշեալ Հայոց իշխանին , թագուհիին , իրենց զաւակներուն ու իրենց բոլոր մարդերուն թողութեան համար , որպէս զի անոնք պատուիրակներուն հետ միասին զրկուին Կաստիլյայի թագաւորին : Այս այսպէս անցած միջոցին՝ Ձեր պատուիրակներուն միջոցով այս պատասխանադիրը կը զրկենք Ձեզ , որպէս զի գիտնաք թէ ի՞նչ պատասխանած է [սուլտանը] իմ ըրած գիմումին : Այս ամենը լսեց [սուլտանը] եւ օգնեց բարեսէր անձերուն, աւելցնելով իր սէրն եւ հաստատելով իր բարեկամութիւնը. որով իր թագաւորութիւնը պատուուեցաւ . եւ այս բանն իր պալատականներուն ու իր ժողովրդին մէջ տարածուեցաւ :

Շարունակեցէք ուրեմն ինչպէս որ սկսած էք Ձեր սէրը Ձեր բարեսէր պետութիւններուն հետ, եւ հետեւեցէք այս ազնիւ սովորութեան ու անթերի կանոնին . շարունակեցէք այս տեսակ նամակներ զրեւ եւ խնդրանքներ ընել, որպէս զի կատարուին : Եւ Աստուած աւելի յայտնութեամբ առաջնորդէ Ձեզ կեանքին մէջ՝ Ձեր արժանիքին ու վսեմչութեան համեմատ : Բարձրեա՛լն Աստուած թող այսպէս կամենայ :

Ի քսաներորդ օրն Րաջար պարզ ամսոյ , ի թուին Մաւրիտանացւոց եօթհարիւր ութսունչորս տարւոյն (1) :

Արքայական թափօրը՝ նախկինէն աւելի մեծ չքով ու հանդէսով մտաւ Բաղախոզ :

(1) Այսիքով՝ 28 սեպտ. 1382 , ըստ նոյն Ժամանակագրութեան :